Տ. ՎԱՐԴԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԳԱՅԱՆԵ ՎԱՆՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

(մարտի 3, 2024 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

Սիրելի՛ հավատացյալ քույրեր եւ եղբայրներ, արդեն չորրորդ կիրակին է, ինչ մենք, որպես Հայաստանյայց Առաքելական Եկեղեցի, այսպես ծածկված խորանով ենք մասնակցում եկեղեցական արարողություններին: Եւ դա նշանն է, որ մենք Մեծ պահքի շրջանում ենք, եւ մեր Սուրբ Եկեղեցին մեզ հրավիրել է ապաշխարության, հոգեւոր խորհրդածության, վերականգնվելու: Աստծու աներեւույթ ներկայության գահը խորհրդանշող Սուրբ Խորանը փակվել է մեր հայացքի առջեւ, եւ Խորանի հետեւում Սուրբ Պատարագ է մատուցվում, եւ մենք միայն հնչյուններն ենք լսում ու այդպես ճաշակում հավիտենական կյանքի այդ քաղցրությունը:

Սուրբ Պատարագի ենք մասնակցում, սակայն հաղորդություն չենք ստանում, որովհետեւ մենք՝ որպես մեր նախահայր Ադամի ժառանգորդներ, մեղքով անիրավացել ենք: Մենք մեր առօրյայում սայթաքումներով ու սխալներով մեր կյանքը Աստծուց հեռացրել ենք: Եւ մեր Եկեղեցին հրավիրում է մեծագույն հաղթական Սուրբ Հարության եւ վերանորոգության պայծառ տոնին պատրաստվելու մեր աստվածանման էությամբ, նոր՝ հոգեւոր մարդու ձեւավորմամբ: Այս շրջանն ընտրված է պատրաստվելու համար, որպեսզի մեր կյանքը, մեր հոգին, մեր սիրտը մեր միտքը մաքրագործենք եւ հեռու վանենք այն բոլոր չար գործերն ու սովորությունները, որոնք չարի դրդմամբ մեր կյանքում բույն են դրել եւ արմատավորվել:

Ամեն կիրակի, որ մենք մասնակցում ենք Մեծ պահքի այս արարողություններին, մեր Եկեղեցին մեզ հրավիրում է խորհրդածելու մի կարեւոր խորհրդի մասին: Եւ այսօր՝ չորրորդ հանգրվանին, մենք հրավիրվել ենք

խորհրդածելու Ղուկաս ավետարանչի փոխանցած, Տիրոջ կողմից պատմվող Անիրավ տնտեսի առակի մասին։ Պատմում է, թե մեծահարուստ մեկը մի տնտես ուներ։ Այս տնտեսի դեմ ամբաստանություն է լինում, եւ տերը կանչում է նրան եւ ասում՝ տուր քո տնտեսության հաշվետվությունը եւ ապա թող պաշտոնդ։ Եւ տնտեսը մտածում է՝ ես աշխատանքի սովոր չեմ եւ մուրալ էլ ամաչում եմ, ինչ պիտի անեմ։ Ճարպիկ տնտեսը մի հնարամիտ, իմաստուն գաղափար է հղանում. կանչում է տիրոջ պարտապաններին եւ նվազեցնում է ամեն մեկի ձեթի, ցորենի եւ այլ պարտքերի քանակը, որպեսզի, երբ զրկվի այս աշխատանքից, կարողանա գնալ նրանց մոտ կերակուրի եւ հյուրընկալության։ Եւ երբ տերն իմանում է այս մասին, կանչում է տնտեսին եւ գովում նրա հնարամտությունը եւ իմաստությունը։ Ապա այս առակը, սիրելինե՛ր, մեր Տերը Հիսուս ամփոփում է մի շատ հետաքրքիր արտահայտությամբ՝ ասելով, որ այս աշխարհի որդիներն ավելի հնարամիտ են, քան լույսի որդիները։ Եւ շարունակում է տնտեսի առակի պատմությունը՝ նաեւ մեզ հորդորելով, որ այս աշխարհում մամոնայից, մեզ տրված նյութից մենք նույնպես կարող ենք բարիք ստեղծել։

Սիրելի՛ հավատացյալներ, Աստված մեզ կյանք է տվել եւ մեզ տնտեսներ է կարգել այս կյանքի մեջ՝ այն պահպանելու եւ զարգացնելու համար։ Բայց մենք հաճախ մեր կյանքը փչացնում ենք մեր ընտրած սխալ ընթացքով, մեր «ես»-ի, անձնասիրության ծայրահեղ դրսեւորումներով։

Կյանքում Աստված մեզ ժամանակ է տվել եւ մեզ տնտեսներ է կարգել մեր կյանքի ժամանակի մեջ՝ շահեցնելու մեր կյանքի քսան, քառասուն, վաթսուն, իննսուն տարիները եւ այդ ժամանակը հարստացնելու, լցնելու հոգեւոր հավիտենական եւ ոչ թե զգացական եւ անցողիկ արժեքներով։

Աստված մեր կյանքի որոշակի ժամանակի մեջ մեզ տվել է այս մարմինը՝ որպես տնտեսություն, եւ միտքը դրել է մեր մեջ՝ որպես տնտես, որպեսզի ամեն անգամ մենք մեր արարքների մեջ ընտրություն կատարենք, այս կամ այն ճանապարհով գնալու ընտրություն. լսել աշխարհի ձայնը, եւ կյանքն ապրել աշխարհի որդիների նման, թե՞ Աստծու լույսը տեսնել եւ գնալ լուսո որդիների ճանապարհով։ Այդ ընտրության առջեւ մեր միտքը դատավոր է եւ տնտեսն է մեր մարմնի, մեր կյանքի, մեր ժամանակի։

Աստված մեզ բազմաթիվ այլ տնտեսություններ եւս տվել է։ Մեր ընտանիքը յուրահատուկ տնտեսություն է, որովհետեւ մենք՝ որպես այդ

ընտանիքի անդամներ, հայր, մայր կամ զավակ, մեր իրավունքներին զուգահեռ նաեւ պարտականություններ ունենք, բայց մենք հաճախ խոսում ենք մեր իրավունքների մասին, ոչ թե պարտականությունների, եւ այդ պատճառով մեր ընտանեկան հոգեւոր անդորրը խաթարվում է։

Մեզ Աստված, որպես տնտեսություն, տվել է մեր միջավայրը, մեր շրջապատը, մեր գործը, մեր աշխատանքը, մեր ծառայությունը եւ այդ ամենի մեջ մեզ՝ որպես տնտես, կարգել է հնարամտությամբ գործելու։ Մեր Սուրբ Եկեղեցին մեր հայ ազգի հավաքական կյանքում Աստված հիմնել է որպես մի յուրահատուկ տնտեսություն, որտեղ կարգել է հոգեւորականներին՝ Աստծու խոսքը հավատացյալներին վկայելու, արդարության, ճշմարտության եւ բարության մասին խոսելու եւ ուսուցանելու։

Որքան էլ տարբեր հարձակումներ, սխալ ընկալումներ ու մեկնաբանություններ լինեն, միեւնույն է, այդ Եկեղեցու մեջ տնտեսը պետք է վկայի արդարության, ճշմարտության եւ բարության խոսքը։

Սիրելինե՛ր, այսօր մեզ մեր Տերը հրավիրել է խորհրդածելու, թե ինչ ունեինք, ինչից զրկվեցինք եւ ինչպես կարող ենք վերականգնել։ Երբ առաջին կիրակիին մենք հանդիպեցինք՝ հիշատակելու Բուն բարեկենդանը, մենք խորհրդածեցինք, թե մեր նախահորն ու նախամորը Աստված երջանիկ կյանք էր պարգեւել, սակայն Տիրոջը չհնազանդվելով, հակառակ գնալով արդարության, ճշմարտության եւ բարության խոսքին՝ նրանք կորցրեցին արդարությունը եւ արտաքսվեցին երանական եւ երջանկության վիճակից։

Եւ երկրորդ կիրակիին մենք հիշատակեցինք, որ այդ պատիժը չի ուշանում. երբ մենք սխալ ենք գործում Աստծու խոսքի եւ ճշմարտության հանդեպ, արտաքսվում ենք Նրա ներկայությունից եւ Նրա հետ կենդանի հաղորդությունից։

Եւ երրորդ կիրակիին մեր Սուրբ Եկեղեցին ասաց, որ մենք՝ որպես քրիստոնյաներ, անհույս կորած չենք, վերադարձի եւ վերականգնումի հույս ունենք։ Տերը եկել եւ կանչում է մեզ, որպեսզի ապաշխարությամբ վերադառնանք մեր Հոր գիրկը եւ վերականգնենք սիրո գուրգուրանքը Տիրոջ մեջ։ Միայն պարտավոր ենք անդրադառնալ, որ սխալ ընթացքի մեջ ենք, եւ անպայման Տերը պիտի ընդունի եւ շնորհազարդի մեզ պատմուճանով։

Եւ այս կիրակի մեր Սուրբ Եկեղեցին ուսուցանում է, թե ինչպես կարող ենք վերականգնվել եւ վերագտնել մեր կյանքի երջանկությունը։

Ուրեմն, գործադրելով այն բոլոր շնորհները, տաղանդները, որ Տերը տվել է մեզ, մեր ունեցած տնտեսությունների մեջ պիտի հնարամտությամբ վարվենք, որպեսզի մեր կյանքում Տիրոջ ներկայության, Նրա հետ կենդանի հաղորդության զգացողությունը վերականգնենք։

Եւ, ուրեմն, սիրելինե՛ր, Անիրավ տնտեսի առակով մեզ Տերը ուսուցանում է, թե ինչպես կարող ենք նյութից հոգեւոր բարիքներ ստեղծել, հավիտենական արժեքներ արարել մեր կյանքում՝ հավատարիմ մնալով այդ արժեքներին, զգալ երջանկության քաղցը եւ հավիտենության արժանանալ։ Ուրեմն այսօր, սիրելի՛ հավատացյալներ, մեզ մեր Սուրբ Եկեղեցին հրավիրում է հնարամտություն գործադրել, ինչպես այս աշխարհի որդիներն են անում եւ նյութով հոգեւոր գանձեր կերտել եւ այդ գանձերը՝ որպես լույս, տարածել։

Այն մարդիկ, որոնք հարստություն ունեն, ավելի լավ գիտեն՝ այդ հարստությունը ինչպես բազմապատկել, նրանք, որոնք իշխանություն ունեն, ավելի լավ գիտեն՝ ինչպես պահել այն։ Մեզ մեր Տերը սովորեցնում է, որ մենք նույնպես՝ որպես հավատացյալներ, լույսի որդիներ ենք, եւ մենք պիտի մեր հավատքը շահեցնենք։ Մենք՝ որպես քրիստոնյաներ, նաեւ տնտեսներ ենք մեր հավատքի եւ հավատքը պիտի հնարամտությամբ գործի վերածենք։ Եթե մենք չճաշակենք այդ հավատքի պտուղը, անիմաստ կլինի մեր հավատքը։

Ուրեմն մենք պիտի սովորենք՝ ինչպես օգտագործել աշխարհի որդիների հնարամտությունը՝ նյութը եւ նյութականը վերածելու անդենական հավիտենական արժեքի։ Պողոս առաքյալի բնութագրմամբ՝ լինենք լուսո որդիներ եւ որպես լուսո որդիներ՝ ընթանանք աստվածային առաքինությունների բարության, արդարության եւ ճշմարտության ուղիով։

Աստված թող Իր իմաստության լույսը մեր մտքում ծագեցնի, որպեսզի անխոտոր շարժվենք այդ լույսի ճանապարհով, ծաղկեցնենք եւ պտղաբեր դարձնենք մեր հավատքը եւ ժամանակի մեջ այն բոլոր հնարավորությունները, որ Աստված տվել է մեզ, վերածենք հոգեւոր բարիքների։ Ապաշխարության, վերադարձի, վերականգնման միջոցով գտնենք Աստծուն, հաշտվենք Աստծու հետ եւ մշտապես զգանք Նրա շնորհքը, սերը եւ խաղաղությունը այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից. ամեն։